Նախագիծ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ՍՏԵՂԾՎԱԾ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի 98-րդ և 123-րդ հոդվածները, ինչպես նաև 26.10.2021թ. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստում «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության շփման գծում տիրող վիճակը և սահմանազատման խնդիրները» հրատապ թեմայով քննարկման արդյունքները,

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը.

**Դատապարտում է՝**

ա) Ադրբեջանի և Թուրքիայի կողմից (ահաբեկչական խմբավորումների և վարձկանների ներգրավմամբ) 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած լայնամասշտաբ զինված հարձակումը:

բ) Ադրբեջանի կողմից ռազմական գործողությունների նաև դադարումից հետո գերեվարված և պատանդառված անձանց նկատմամբ արձանագրվող միջազգային իրավունքի կոպտագույն խախտումները:

պատերազմական հանցագործություն համարվող գործողությունները,

գ) Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության տարածքների բռնազավթումը:

դ) Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքների ներխուժումը, շփման գծում ապօրինի ամրաշինական աշխատանքները, շարունակաբար ուժի գործադրումը կամ այն գործադրելու իրական սպառնալիքները:

ե) Ադրբեջանի ռազմաքաղաքական և հանրային շրջանակների կողմից հայատյացության չդադարող հռետորաբանությունը, միջազգային հանրությանը միակողմանի և խեղաթյուրված տեղեկատվության ներկայացումը:

**Արձանագրում է, որ**

ա) Ադրբեջանի կողմից վերը նշված հանցավոր գործողությունները շարունակվում են: Ավելին՝ Հայաստանի ու Արցախի տարածքների նկատմամբ հավակնությունները շարունակվում են:

բ) Սահմանների որոշումը սահմանակից պետությունների բացառիկ իրավասության ոլորտն է, և որ սահմանները որոշվում են սահմանակից պետությունների միջև միջազգային իրավունքի վրա հիմնված համաձայնության միջոցով՝ Միավորված Ազգերի Կազմակերպության «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969թ. Վիենայի կոնվենցիայի համաձայն, ըստ որի, ի թիվս այլ դեպքերի՝ առոչինչ է ուժի սպառնալիքի կամ այն կիրառելու միջոցով ցանկացած միջազգային համաձայնություն:

գ) Արցախի ժողովրդի՝ իր պատմական տարածքում ինքորոշման իրավունքի երաշխավորված իրացումը, բռնազավթված տարածքների դեօկուպացիան տարածաշրջանում խաղաղության հաստատման նախապայման է՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափով:

**Առաջնորդվում է** Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, որի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերը լուծվում են բացառապես հանրաքվեի միջոցով, ինչպես նաև Հայաստանի Հանարապետության Գերագույն խորհրդի 1992թ. հունիսի 8-ի որոշմամբ, ըստ որի՝

ա) Հայաստանի Հանրապետությունը հետևողականորեն սատար է կանգնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը և նրա բնակչության իրավունքների պաշտպանությանը:

բ) Հայաստանի Հանրապետության համար անընդունելի է միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում:

**Գտնում է, որ**

ա) Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես ներկայացնող որևէ անձ, այդ թվում՝ գործադիր իշխանության ղեկավարը կամ այլ ներկայացուցիչը չի կարող գրավոր կամ բանավոր համաձայնության գալ խախտելով Արցախի Հանրապետությանը և Հայաստանի Հանրապետությանը վերաբերող վերը նշված իրավական նորմերը: Այդպիսի ցանկացած համաձայնություն ի սկզբանե առոչինչ է:

բ) Ադրբեջանի Հանրապետությունը միջազգային-իրավական համակարգում չունի որևէ իրավունք, իսկ Հայաստանի Հանրապետությունն էլ՝ իրավական պարտավորություն՝ առանց փոխադարձ համաձայնության հիմք ընդունել որևէ քարտեզով արձանագրված սահմանները,

գ) Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը ապօրինի բռնակցված Արցախը չի կարող ընդգրկվել Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում,

դ) Uti possidetis սկզբունքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ երկու կողմերը համաձայնում են այն ընդունելու որպես սահմանազատման հիմք:

ե) Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև վեճերը կարող են լուծվել բացառապես խաղաղ միջոցներով՝ առանց ուժի և ուժի սպառնալիքի կիրառման:

**Պահանջում է** Հայաստանի Հանրապետության կառավարությունից.

ա) Զերծ մնալ որևէ բանակցությունից, գրավոր կամ բանավոր համաձայնություններից, որոնք կխախտեն ՀՀ Սահմանադրության պահանջներն ու հայ ժողովրդի հավաքական կամքը՝ արտահայտված անկախության հռչակագրով:

բ) Որպես խորհրդարանական կառավարման երկիր՝ պարբերաբար հաշվետու լինել ժողովրդի ներկայացուցչական բարձրագույն մարմնին՝ ՀՀ Ազգային ժողովին: Զինված ուժերի բարեփոխումների և առհասարակ անվտանգային համակարգին վերաբերող հարցերում լինել հնարավորինս հրապարակային, քննարկման դնել ինչպես մասնագիտական, այնպես էլ խորհրդարանական տարբեր ձևաչափերով:

գ) Առաջնագծում ապահովել անվտանգության անհրաժեշտ ամրաշինական-ինժեներական աշխատանքներն ու տեխնիկական համակարգերը: Արագացնել անվտանգության համակարգի վերափոխումների և արդիականացման գործընթացն՝ այն համահունչ դարձնելով հետպատերազմական շրջանի սպառնալիքներին և տարածաշրջանում առկա մարտահրավերներին:

**Կոչ է անում** միջազգային կազմակերպություններին, բարեկամ երկրների խորհրդարաններին՝ դատապարտել Ադրբեջանի և Թուրքիայի կողմից իրականացված և շարունակվող հանցագործությունները, ձեռնարկել վերջիններիս նկատմամբ իրավական պատասխանատվության ենթարկելուն ուղղված գործողություններ: